



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

<< ----->> << ----->> 2021թ.

N -----

**Հանրային հեռուստադրամային
լրատվական ծառայության լրագրող՝ Անի Օհանյանին
էլ.փոստ(aniarami90@gmail.com)
հեռ.(094 44 23 29)**

Ի պատասխան Ձեր՝ 22.07.2021թ. << Արմավիրի մարզպետարան հասցեագրված հարցմանը՝ հայտնում ենք, որ

1. Արմավիրի մարզի 97 համայնքներ ապահովված են խմելու ջրով:Վերջին համայնքը, որը խմելու ջուր չի ունեցել եղել է Կողբավան համայնքը, սակայն 2019թ. սուրվենցիոն ծրագրի շրջանակներում ապահովվել է 24 ժամյա մշտական և որակյալ ջրով (Ախուրյան գետի հովտի աղբյուներից): Մնացած բոլոր համայնքները ապահովված են խմելու ջրով՝ մի մասը 24 ժամյա ռեժիմով, մի մասը տարբեր ժամային գրաֆիկներով:
2. Մարզի համայնքներում պարբերաբար կատարվում են խմելու ջրի ներքին ցանցերի հիմնանորոգման, վերանորոգման, մասնակի վերանորոգման, և նոր թաղամասերի ջրագծերի անցկացման շարունակական աշխատանքներ: 2019թ. մարզում առաջնահերթ լուծում պահանջվող խնդիրների շրջանակներում հիմնանորոգվել և վերանորոգվել են մարզի՝ (Զանֆիղա, Գետաշեն, Բերքաշատ, Սարդարապատ, Շենավան, Նոր Արտագերս, Խորոնք, Լուկաշին, Արմավիր, Ամասիա) խմելու ջրի ջրամատակարարման ցանցերը: Տավրոիկ համայնքում ձեռք է բերվել խորքային հորի պոմպ: Տարոնիկ համայնքում կառուցվել է խմելու ջրի ենթակայան: 2020թ. սուրվենցիոն ծրագրերով Գեղակերտ, Տանձուտ և Մարգարա համայնքներում իրականացվել է խմելու ջրի ջրամատակարարման ցանցի հիմնանորոգում, իսկ 2021թվականի ծրագրերում ընդգրկված են մարզի՝

Բաղրամյան /Էջմ/, Լենուղի և Տանձուտ համայնքների խմելու ջրի ջրամատակարարման ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ:


3. Տեղեկացվում է, որ Արմավիրի մարզի թվով 48 համայնքների ջրամատակարարման համակարգերի սպասարկումը իրականացվում է <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից, իսկ 49 համայնքների ջրամատակարարման համակարգերի սպասարկումը իրականացվում է համայնքների կողմից:

ՀՀ Արմավիրի մարզպետարանը հետևողական է համայնքներում խմելու ջրի որակի ջրամատակարարման ուղղությամբ և այդ կապակցությամբ մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկվել է սահմանել հսկողությունը:

Հարգանքով՝

Ա.Հովհաննիսյան

 Недействительная подпись



VERIFIED OCSP 27.07.2021 15:34:56 GMT+4

Կար. Ա.Հովհաննիսյան Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023
Ռ. Սահակյան
Հեռ՝ /0237/2-13-77